

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
, ՍԵՎԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇՈՂԱԿՆԻ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՄԱՌԱՆՈՅ
ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2024 - 27 Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(լրամշակված)**

, ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ տնօրեն՝

Ա.ԱՊԻԿՅԱՆ

Երևան – 2024թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Չրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի [մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ] և սոցիալական միջավայրի [մարդու առողջության և անվտանգության], գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

Չրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով Չրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

Նախատեսվող գործունեություն` Չրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և [կամ] գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

ազդակիր համայնք` Չրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի [համայնքների] բնակչություն` ֆիզիկական և [կամ] իրավաբանական անձինք:

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և [կամ] նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

գործընթացի մասնակիցներ` պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ` ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և [կամ] փորձաքննության գործընթացին:

հայտ` ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման և [կամ] նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փայտեր:

բնության հատուկ պահպանվող տարածք` ցամաքի [ներառյալ` մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը] և համապատասխան օդային ավազանի` սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկ` բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և [կամ] հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների գուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկի արգելոցային գոտի` ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և **կամ** հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել **մեղմացնել** բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, արբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների **բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ** հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը **կամ**, ծավալը **կամ**, զանգվածը **կամ**.

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված **օգտագործման համար պիտանի վիճակի բերելու** միջոցառումների համալիր, որը կատարվում է **2** փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական

ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված **【անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու】** միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	7
1.1.Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	7
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.....	7
1.3.Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.4.Նախագծման նորմատիվ - իրավական հենքը	8
2. ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	10
2.1. Գտնվելու վայրը	10
2.2.Ռեյիեֆ, երկրաձևաբանություն	13
2.3.Երկրաբանական կառուցվածքը	14
2.4.Ծրջանի սեյսմիկ բնութագիրը	16
2.5.Սողանքներ.....	18
2.6.Կլիման և օդերևութաբանական պայմանները.....	19
2.7. Մթնոլորտային օդ	25
2.8. Ջրային ռեսուրսներ.....	25
2.9. Հողեր	28
2.10.Բուսական և կենդանական աշխարհ.....	31
2.10.1. Բուսական աշխարհ.....	32
2.10.2. Կենդանական աշխարհ	33
2.11.Վտանգված էկոհամակարգեր,	35
բնության հատուկ պահպանվող տարածքներ	35
3.ՍՈՑԻԱԼ- ՏԵՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ	37
3.1.Ենթակառուցվածքներ	37
3.2.Ծողակն համայնքը և Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	43
3.3.Պատմության, մշակութային և բնական հուշարձաններ	44
4. ԾՐԱԳՐՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ.....	49
ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ	49
4.1. Նախապատրաստական շրջան և ծրագրային աշխատանքներ	49
4.2.Տեղագրական աշխատանքներ.....	49
4.3.Երկրաբանահանութային աշխատանքներ	49
4.4. Հորատման աշխատանքներ	50
4.5. Փորձնական հանույթ.....	50
4.6. Հետախուզական փորվածքների փաստագրում	50
4.7. Նմուշարկում	50
4.8. Լաբորատոր ուսումնասիրություններ.....	51
4.9. Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ	51
5.ՌԱԴԻՈՄԵՏՐԻԿ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	52
6.ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՀՈՐԱՏՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ.....	52
ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	52
7.ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԸ	52
7.1.Հորատման թագիկների թափոններ	52
7.2.Նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ.....	53
7.3.Կենցաղային աղբ.....	53
8.ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՉԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԸ	54

8.1. Մթնոլորտային օդ	54
8.2. Ջրային ռեսուրսներ.....	54
8.4. Բուսական և կենդանական աշխարհ.....	55
8.5. Սոցիալական ազդեցության գնահատականը	56
8.6. Աղմուկ	57
8.7. Սանիտարա-պաշտպանիչ գոտի.....	57
9. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ	57
10. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ	58
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ... 58	
ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	58
Գրականություն	64

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1.Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկող՝ ՍԵՎԱԲՏԵ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար՝ 80.110.1140443

Գտնվելու վայրը՝ ք.Երևան, Փուշիկի փող. 27/1 բն.28, Հայաստան

Տնօրեն՝ Անի Ապիկյան

Հայտը կազմեց՝ ԱԶ Շ.Խաչատրյանը, ք.Երևան, Նորաշեն թաղ. 27 շ. 71 բն. հեռ. 095300097

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրի Ամառանոց տեղամասում **2024-27**թթ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն:

Ուսումնասիրությունների նպատակն է ՀՀ Արագածոտնի մարզի Շողակն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող տուֆերի հանքավայրի Ամառանոց տեղամասում **2,76** հա մակերեսի վրա իրականացնել տուֆերի հետախուզում, դրանց որակը և քանակը պարզաբանելու համար: Հումքը նախատեսում է օգտագործել երեսպատման և ուղիղ շարվածքների նպատակներով:

1.3.Նախատեսվող գործունեության բնութագիրը

, ՍԵՎԱԲՏԵ ՍՊԸ ընկերությունը ցանկանում է սեփական միջոցներով ՀՀ Արագածոտնի մարզի Շողակն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Շողակնի տուֆի հանքավայրի Ամառանոց տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ երկրի մակերևույթին մերկացած շագանակագույն-սև գույնի տուֆերի որակական և քանակական պարամետրերը գնահատելու նպատակով: Հայցվող տեղամասի մակերեսը կազմում է **2,76** հա:

Ուսումնասիրություններ իրականացնելու համար ընկերությունը կազմել է աշխատանքային ծրագիր, աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և ՀՀ օրենսդրությամբ պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք ներկայացվել են ոլորտի Լիազոր մարմնին փորձաքննության նպատակով:

Ծրագրով նախատեսվում է հետախուզական աշխատանքներն իրականացնել հորատանցքեր միջոցով:

Մինչև լեռնային աշխատանքներ սկսելը նախատեսվում է **4** հա մակերեսի վրա իրականացնել **1:1000** մասշտաբի տոպո և երկրաբանական հանույթ:

Նախատեսվում է **112** մմ տրամաչափի կարծր համաձուլվածքի թագիկով հորատել **12** ուղղահայաց հորատանցք մինչև **5**մ խորությամբ, **URB 2.5A (Z il-131)** տիպի հորատման հաստոցով: Հորատանցքերի նախատեսվող ընդհանուր ծավալը կկազմի **60**զծ.մ:

Բլոկների ելքը գնահատելու համար նախատեսվում է իրականացնել փորձնական հանույթ **100**մ³ ծավալով:

Հորատանցքերից վերցվելու են **17** հանուկային, փորձնական բացահանքից **1** կետային նմուշներ, միներալա-ապարաբանական, ֆիզ-մեխ. և քիմիական կազմի ուսումնասիրությունների համար:

Հորատման հարթակների և ճանապարհների կառուցում ու վերանորոգում չի նախատեսվում, քանի որ ճանապարհներն առկա են իսկ ռելիեֆի հարթ լինելը հնարավորություն է ընձեռում առանց նախնական հարթեցման հորատող մեքենան տեղակայել և հորատել: Հորատումից հետո նախատեսվում է հորատանցքերի լցումը լոռնային զանգվածով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հայտը կազմվել է , ՍԵՎԱՐՏԵՍ ՍՊ ընկերության ֆինանսական միջոցների հաշվին և ներկայացվում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու նպատակով:

1.4. Նախագծման նորմատիվ - իրավական հենքը

Երկրաբանական ուսումնասիրությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է ընդերքի և բնապահպանական ոլորտների օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995թ., փոփոխվել է 2005 և 2015 թվականներին)
- , Մթնոլորտային օդի պահպանության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքը (01.11.1994թ.),
- , Բուսական աշխարհի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքը (23.11.1999թ.),
- , Կենդանական աշխարհի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքը (03.04.2000թ.),
- Հայաստանի Հանրապետության , Հողային՝ օրենսգիրք (02.05.2001թ.),
- Հայաստանի Հանրապետության , Ջրային՝ օրենսգիրք (04.06.2002թ.)
- , Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք՝ ՀՀ օրենք (01.01.2012թ.),
- Հայաստանի Հանրապետության , Անտառային՝ օրենսգիրք (24.10.2005թ.),
- , Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),
- Հայաստանի Հանրապետության , աշխատանքային՝ օրենսգիրք (09.11.2004թ.)
- Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության սպաստված մասին” ՀՀ օրենք (12.12.1992թ.)
- , Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին՝ ՀՀ օրենք (02.12.1998)
- “Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք (04.03.1996թ.)
- , Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքը (09.08.2014թ.),
- , Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին՝ ՀՀ օրենք (11.11.1998թ.)
- “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)
- “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (27.11.2006 թ.):
- , Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարած-


քննչի սահմանման չափորոշիչների մասին ՀՀ կառավարության 20.01.2005թ.Ն 64-Ն որոշում:

- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ. -ի ՈՂ2-Ն որոշում,
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ. -ի ՈՂ4-Ն որոշում,
- ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 31.07.2014թ. -ի ՈՂ84-Ն որոշում:
- ՀՀ Կառավարության 08.09.2011թ. ի ՈՂ396-Ն որոշում
- ՀՀ Կառավարության 10.01.2013թ. -ի ՈՂ22-Ն որոշում
- ՀՀ Կառավարության 14.12.2017թ. -ի ՈՂ1643 -Ն որոշում
- ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի “Հողի բերրի շերտի համան նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի ՈՂ26-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՈՂ1404-Ն որոշում
- ՀՀ Կառավարության 18.08.2021թ. -ի ՈՂ352-Ն որոշում
- ՀՀ Կառավարության 24.10.2021թ. -ի ՈՂ733-Ն որոշում
- , ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 14.08.2008թ ՈՂ967-Ն որոշում
- , Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերանշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 15.06.2017թ. -ի ՈՂ676-Ն որոշում
- , Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 22.02.2018թ. -ի ՈՂ194-Ն որոշումը
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. ՈՂ138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” ՈՂ-111 – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”:
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. ՈՂ 04-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ ՈՂ 2.1.7.003 -10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”:
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի ՈՂ333-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆՈՂ2.4 -009-06 հաստատելու մասին”:
- ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. ՈՂ369-Ն հրամանը

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Գտնվելու վայրը

«Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրը [ներառյալ Ամատոնոց տեղամասը] գտնվում է Ապարան – Երնջատափ – Եղվարդ - Երևան ավտոճանապարհի հարևանությամբ: Մոտակա բնակավայրերն են Երնջատափ, Շողակն և Բուժական գյուղերը, որոնցից գտնվում է համապատասխանաբար՝ **1.7** կմ, **2.1** կմ և **2.4** կմ հեռավորությունների վրա [նկ.1, 2]: Բնակավայրերի հետ կապն իրականացվում է հիմնականում ասֆալտապատ ճանապարհներով:



Նկ.1: ՀՀ Արագածոտնի մարզի քարտեզ [1]:

★ հայցվող տեղամասի տեղադիրքը



Նկ.2: Հայցվող տեղամասի տեղադիրքը: Լուսանկարը՝ google earth ծրագրից է:

Հայցվող տեղամասը սահմանափակված է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (կոորդինատները բերված են **ARMWG S 84** համակարգով):

- 1 X = 8456271.549 Y = 4478983.592**
- 2 X = 8456221.541 Y = 4479003.606**
- 3 X = 8456221.639 Y = 4479012.352**
- 4 X = 8456259.244 Y = 4479026.100**
- 5 X = 8456350.716 Y = 4479120.224**
- 6 X = 8456393.976 Y = 4479076.161**
- 7 X = 8456423.488 Y = 4479104.193**
- 8 X = 8456380.051 Y = 4479148.008**
- 9 X = 8456461.554 Y = 4479225.413**
- 10 X = 8456529.690 Y = 4479196.861**
- 11 X = 8456474.351 Y = 4479138.729**
- 12 X = 8456515.630 Y = 4479070.000**
- 13. X = 8456460.388 Y = 4479047.580**


Հայցվող տեղամասի մակերեսը կազմում է 2.76հա (նկ.3):

ՀԱՅՅՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՍԽԵՄԱՆ

(հատված K-38-125-Դ-6 թերթից)

Մ 1:10000

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր




հայցվող տեղամասը

Նկ. 3: Իրավինականային քարտեզ (Մ1:10000):

2.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Հայցվող տեղամասը գտնվում է Արայի լեռան հյուսիս-արևելյան լանջերի ստորոտին, որտեղից մոտ մեկ կմ հեռավորության վրա սկսվում են Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերը (նկ.4):



Նկ. 4: Հայցվող տեղամասի տարածաշրջանի լանջերի թեքության սխեման (հատված հայաստանի ազգային ատլասից)

Տեղամասից մոտ **5** կմ դեպի արևմուտք Քասաղի խորը կտրտված կիրճն է: Ծրջանի լեռնագրական միավորներն են Արայի լեռը, Եղվարդի սարահարթը և Ծաղկունյաց լեռնաշղթան: Տեղամասը գտնվում է սրանց միջին մասում:

Արայի լեռը գտնվում է հարավ-արևմուտքում՝ Քասաղ և Հրազդան գետերի միջև: Բարձրությունը **2577** մ է: Ունի անկանոն կոնի ձև՝ հատած գագաթով և օղակաձև խառնարանով: Հարավ-արևմուտքում կա բնական պատռվածք:

Արայի լեռը բազմաձին հրաբուխ է: Կազմված է նեոգենի հրաբխային ապարներից: Լանջերը կտրտված են ձորակներով: Արևմտյան մասում հարակից է Քասաղի կիրճին: Իր մեկուսացված դիրքի շնորհիվ, լեռնագագաթը իր ամբողջ մակերեսով և գեղեցկությամբ երևում է Հայաստանում շատ վայրերից և բարձր լեռնագագաթներից:

Եղվարդի սարավանդը գտնվում է Արայի լեռ հրաբխային զանգվածից հարավ: Արևմուտքում գառիթափ իջնում է դեպի Քասաղի կիրճը, արևելքում երկու, տեղ-տեղ երեք դարավանդներով Հրագդանի հովիտը:

Եղվարդի սարավանդը եզրավորվում է Արարատյան դաշտով: Ունի թույլ ալիքավոր, բլրապատ մակերևույթ և հյուսիսից հարավ ընդհանուր թեքություն: Բարձրությունը **1000—1600** մ է: Կան հրաբխային կոներ **【Արապար, Եղվարդի եռաբլուրներ, Մուրադսար են】**: Տարածված են քարացրոնները: Եղվարդի սարավանդը կազմված է վերին պլիոցենի և չորրորդական դոլերիտային մոխրագույն լավաներից, անդեզիտաբազալտներից և տուֆերից:

Եղվարդի սարավանդում գերակշռում են կարբոնատային գորշ հողերը, հյուսիս և արևելք մասերում՝ լեռնային շագանակագույն հողերը: Եղվարդի դարավանդում տարածված է կիսաանապատային, հյուսիսում չոր տափաստանային բուսածածկույթը:

Եղվարդի սարավանդը ոռոգվում է Արգնի-Շամիրամ ջրանցքի, Քասաղի ճախափնյա ոռոգման համակարգի ու մի քանի ջրհան կայանների ջրերով և դարձել է այգեգործական ու պտղաբուծական շրջան:

Ծաղկունյաց լեռնաշղթան գտնվում է Կոտայքի մարզի սահմանագլխին: Սկսվում է Փակբակի լեռնաշղթայի միջին մասից՝ Ուղտաքար լեռան գագաթից դեպի հարավ – արևելք և հարավ-արևելյան ուղղությամբ հասնում է մինչև Հրագդան գետի աջ ափը: Երկարությունը **42** կմ է, ամենաբարձր գագաթը Թեղենիս լեռն է՝ **2851** մ **11, 21** :

Ջրբաժան է Քասախի ու Հրագդանի ավազանների միջև: Ունի ծալքաբեկորային ծագում: Արտաքին լանջերը հիմնականում մեղմաթեք են՝ կտրտված բազմաթիվ մանր ձորակներով ու մի քանի խոշոր հովիտներով: Վերը նշված երկու ճյուղավորումների իրար նայող ներքին լանջերը շատ ավելի գառիթափ են: Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերից են սկսվում Դալարը, Արայի գետը, Մարմարիկի, Հրագդանի, Քասախի բազմաթիվ վտակներ: Ամենաբարձրը հարավային ճյուղավորության վրա գտնվող Թեղենիսն է **2851,1** մ բարձրությամբ: Բարձր գագաթներից է նաև Ծաղկունյացը՝ **2821** մ բարձրությամբ: Տիրապետում են լեռնատափաստանային, լեռնաանտառային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Լեռնաշղթայի լանջերի զգալի մասը՝ մինչև **2400** մ բարձրությունները անտառածածկ են:

Հայցվող տեղամասի ռելիեֆը հարթ է, տեղ - տեղ բլրավոր: Թեքության անկյունը կազմում է **5-10°**:

2.3.Երկրաբանական կառուցվածքը

Ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Հանքավան - Չանգեզուրի կառուցվածքա - ֆորմացիան գոտու սահմաններում:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը շատ պարզ է **【նկ.5】**: Կտրվածքի հիմքում տեղակայված են Արագածի և Արայի լեռան սկզբնական անդեզիտա-դացիտային կազմի արտավիժումները, որոնք մերկանում են հրավային և հյուսիս-արևելյան շրջաններում: Դրանք խիտ, մուգ մոխրագույն առաջացումներ են:

Անդեզիտա-դացիտներից վերև տեղադրված են լճային նստվածքներ, գլաքարերի ենթաշերտերով կավեր, ավազաքարեր և պեմզային ավազներ: Հաստվածքի վերևի մասում գերակշռում են պեմզաները: Դրանք բավականին լայն տարածում ունեն հարավային շրջաններում և հյուսիս - արևմուտքում:

Գրեթե հորիզոնական տեղադրված հաստաշերտ է, որի հաստությունը հասնում է մինչև **30**մ:


Պեմզաներից վերև տեղադրված են անդեզիտային կազմի մուգ-շագանակագույն, սև, թուրթունագույն - շագանակագույն տուֆերը, որոնք տարածված են շրջանի կենտրոնական և հյուսիս-արևմտյան շրջաններում: Դրանք մասամբ ծածկված են լճային

նստվածքներով՝ ավազներով, գլաքարերով, կավային պեմզաներով: Հանդիպում են կենտրոնական շրջաններում կղզիակների տեսքով՝ ռելիեֆի իջեցված տեղամասերում:

Հարավային շրջաններում տարածված են այսպես կոչված, Աշտարակի **և** անդեզիտ-բազալտների հոսքերը:

Ժամանակակից այուլվիա, դեյուլվիա և էյուլվիա նստվածքները տարածված են Քասաղի կիրճում:

Հայցվող տեղամասում Արային լեռան երրորդ ժայթքման տուֆալավաներն ու տուֆերն են:



Պայմանական նշաններ

	Ժամանակակից այլվումիալ, պրոյուվիալ նստվածքներ՝ ավազներ, կավեր, ավազակավեր		Վերին պլիոցեն: Անդեզիտադացիտային կազմի երակներ և դայկաներ
	Վերին չորրորդական - ժամանակակից նստվածքներ, սառցադաշտային ավազակավեր, հրբխա-ճալաքարախառնուրդային		Վերին եօցեն: Գաբրո-պորֆիրոսներ
	Վերին չորրորդական առաջացումներ՝ ստորին շերտատուփ - սառցադաշտային, ջրասառցադաշտային կավավազներ, ավազակավեր մեծազլաքարային-ճալաքարային		Խզվածքներ
	Երկրորդ շերտատուփ - Լճային-ալյուվիալ պեմզային ավազներ և ճալաքարեր		հայցվող տնդամասի տնդադիքքը
	Երրորդ շերտատուփ, Արթիկի տիպի		
	Ստորին չորրորդական, ստորին շերտատուփ, Լճային ավազներ և կավեր		
	Վերին պլիոցեն Արագածի արտավիժումներ՝ անդեզիտադացիտներ, դոլերիտային թագալտներ, անդեզիտաբազալտներ		
	Վերին պլիոցեն, Հատիսի շերտախումբ: Լիպարիտներ, լիպարիտադացիտներ, պեռլիտներ, պեմզաներ		
	Ստորին միոցեն: Գիպսաբեր կավեր, մերգելներ, խայտաբղետ ավազաքարեր		
	Միջին եօցեն: Տուֆավազաքարեր.		
	Ստորին եօցեն: Ավազաքարեր, տուֆիտներ, ալյուվիոսներ, մերգելներ		
	Վերին կավիճ: կրաքարեր, մերգելներ, ավազաքարեր, կոնգլոմերատներ		

Նկ.5: Շողակնի տուֆերի երևակման շրջանի երկրաբանական քարտեզ (Մ1:50000): Կազմվել է Վ.Անարյանի, Ջ.Հովհաննիսյանի Գ.Տեր-Մեսրոպյանի և Վ.Դուրգարյանի քարտեզներից:

2.4.Շրջանի սեյսմիկ բնութագիրը

ՀՀ տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային սալերի բախման գոտում ինչով և պայմանավորված է տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը:

ՀՀ տարածքում հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոտիները՝ Մերձքուռի, Սոմխեթ - Ղարաբաղի, Մերձսևանի, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց - Չանգեզուրի, Երևան - Օրդուբաղի, Ուրծ-Վայքի: Նշված գոտիների սահմաններով են անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները: Դրանցից ամենախոշորներն են՝ Սևան-Աքերայի, Փամբակ-Սևան-Սյունիքի, Գեղամա, Գառնիի, Փարաքար – Դվինի, Միջին Արաքյան /Երևանյան/ և այլ խզվածքային խախտումներն ու բեկվածքները **13, 5, 61:**

Հայցվող տեղամասի շրջանը գտնվում է գառնու խզվածքային գոտու վրա(նկ.**6**): Այս շրջանում համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման քարտեզի գետնի հարաբերական հորիզոնական արագացումները կազմում են **0.4 ս/վ²:** Երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է **7 M :**




Նկ. 6: ՀՀ Հյուսիսային կեսի ակտիվ խզվածքների սխեմատիկ քարտեզ (հատված Հայաստանի ազգային ատլասից [5]):

Բեկվածքները թափանցում են երկրկեղևի **40-50** կմ խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են **5-10** կմ լայնություն ունեցող գոտիներով:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեյի նախագահի **28.12.2020** թ. **N102** -Ն հրամանով սահմանվում է ՀՀԾՆ **20.04** - , երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերը, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/:


Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության անոդ հաջորդականությամբ՝ **1, 2, 3** սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար **300, 400** և **500** սմ/վրկ² է (նկ.7): Նույն հրամանի հավելմաս **2**-ում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում հայցվող տեղամասի տարածաշրջանի Ապարան, Հրազդան, Չանենցավան, ինչպես նաև Երնջատափ, Բուժական և Շողակն բնակավայրերը գտնվում են **A=0.4 g** սեյսմիկ գոտում: Ուսումնասիրություններ կատարվելիք տեղամասում շենքեր և շինություններ չեն կառուցվելու: Ժամանակավոր օգտագործման համար տեղադրվելու է վազոն-տնակ:



նկ. 7: ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ, ըստ է ՀՀՇՆ 20.04- , երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերն հավելանաւ 1 -ի:

2.5.Սողանքներ

Ըստ **2007 -2010** թթ. ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների ամփոփագրի կազմման աշխատանքների **և** հաշվետվության շրջանում առավել վտանգավոր սողանքային մարմիններ չկան: Հայցվող տեղամասը գտնվում է արմատական տուֆային հաստաշերտի վրա, ռելիեֆը հորիզոնական է: Քարայթափույմների և սողանքների առաջացման ռիսկերը գերոյական են **(նկ. 8):**



Նկ. 8: Կենտրոնական Հայաստանի առավել վտանգավոր սողանքների քարտեզ (Մ1:200000)[7]:

2.6.Կլիման և օդերևութաբանական պայմանները

ՀՀ-ն գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով ու կլիմայական հակադրություններով (նկ.9): ՀՀ կլիմայի վրա մեծ է հարակից տարածքների՝ Մեծ Կովկասի, Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը: ՀՀ տարածքին բնորոշ է արևոտ կլիման: Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ կեսօրին **270**-ից (դեկտեմբեր) մինչև **740** է (հունիս), ցերեկվա տևողությունը՝ համապատասխանաբար՝ **9** ժամ **17** րոպեից մինչև **15** ժամ **3** րոպե:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Արագածոտնի մարզի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի ՀՀԾՆ **22-01-2024** , Շինարարական կլիմայաբանությունն **և** ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի **2011** թվականի սեպտեմբերի **26**-ի **N 167**-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին **15.01.2024** թ. **N 03**-Ն հրամանի հավելվածից:


Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայաններն ունեն դիտարկումների բավականին երկար **(30 տարուց ոչ պակաս)** շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի տվյալների հաշվառումով:

Տարածաշրջանի կլիման չոր մայրցամաքային է, շոգ ամառով և ցուրտ ձմեռով: Ջուրը տեղում է աշնանը և ձմռանը ու պահպանվում մոտ **4** ամիս:

Ստորև բերված աղյուսակներով **(1-12)** ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումները, որոնք պետք է հաշվառվեն ներդրումային գործընթացի բոլոր փուլերում:

Աղյուսակները լրացված են ըստ , Ծինարարական կլիմայաբանություն ՀՀԾՆ **22-01-2024** տեղեկագրում առկա , Ապարանի օդերևութաբանական կայանի տվյալների:



Նկ.9: ՀՀ կլիմայական գոտիավորման սխեման:

Աղյուսակ 1.

Օդի միջին ջերմաստիճանը

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												Միջին տարեկան, °C	°C	Բացարձակ առավելագույն, °C
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր			
-8,6	-7,3	-2,5	4,6	9,7	13,5	17,0	17,0	12,9	6,9	0,5	-5,6	4,8	-34,2	33,4

Աղյուսակ 2

Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Մ.ա/Մ.ն	Ըստ ամիսների, °C												Միջին տարեկան
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Մ.ա.	-3.0	-1.7	2.8	10.0	15.8	20.0	23.9	24.3	20.4	13.7	6.3	-0.3	11.0
Մ.ն.	-13.6	-12.5	-7.5	-0.3	4.0	6.9	10.3	9.9	5.6	1.0	-4.3	-10.3	-0.9

Աղյուսակ 3

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր **1**

Օդի ջերմաստիճանը °C									
Ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը		Ամենաշոգ ամսվա միջինը	Տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						Դիտարկված բացարձակ առավելագույնը
Ապահովվածություն, %			Ապահովվածություն, %						
0,99	0,95		1	2	5	10	20	50	
25	24	17.6	35	34	33	32	31	30	35

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Օդի ջերմաստիճանը °C													
Օրական տատանումը							Միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ, n տարիների ընթացքում						
Առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում						Ամենատաք ամսվա միջին օրական տատանումը							
«n»													
2	5	10	20	50	100			2	5	10	20	50	100
21	22	23	24	25	26	13.7	23.6	22	23	24	25	25	26

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Օդի ջերմաստիճանը, °C														
Ամենացուրտ օրվա			Ամենացուրտ հնգօրյակի			Ամենացուրտ ժամանակ աշրջանի միջինը	Ամենացուրտ ամիսների միջինը	Տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտարկված նվազագույնը
Ապահովվածություն			Ապահովվածություն					Ապահովվածություն, %						
0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92			1	2	5	10	20	50	
-26	-25	-24	-22	-21	-20	-7.1	-9.5	-36	-35	-33	-31	-29	-26	-34

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Օդի ջերմաստիճանը, °C													
Օրական տատանումները							Միջին օրական նվազագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ, n տարիների ընթացքում						
Առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ, n տարիների ընթացքում						Ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը							
, n													
2	5	10	20	50	100			2	5	10	20	50	100
20	22	23	24	25	26	10.7		-19	-21	-23	-25	-26	-27

Օդի հարաբերական խոնավությունը

Օդի հարաբերական խոնավությունը, %																		
Ըստ ամիսների													Միջին տարեկան		Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Միջին տարեկան	Միջին ամսական	Միջին ամսական ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժամը 15-ին		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17		
75	73	70	67	66	64	64	61	61	67	73	75	68	75	64	64	46		

Աղյուսակ 8

Մթնոլորտային տեղումները

Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ													Օրական առավելագույն		Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ		Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
Ըստ ամիսների																		
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	տարեկան						
42	48	61	79	89	86	77	58	39	48	48	45	720						
34	49	53	59	70	84	78	79	75	45	87	46	87	244		476			

Աղյուսակ 9

Քամու հաշվարկային արագությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, [h Պա]	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը [մ/վ], որը հնարավոր է մեկ անգամ, ուն տարիների ընթացքում		
			25	50	100
810 3	1.9	18	23	24	26

Աղյուսակ 10

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Ամսական միջին արժեքը, օր												ընդամենը տարեկան
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.7	1.4	1.9	2.2	2.0	2.2	1.1	1.0	1.1	1.0	1.2	1.5	18

Աղյուսակ 11

Արևափայլի տևողություն [ժ] և առանց արևի օրերի քանակ [օր]

Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
ժ	104	115	160	165	214	266	298	287	243	179	134	99	2264
օր	9	7	5	4	2	0.5	0.2	0.2	1	3	5	10	46

Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ, աստիճան
 [տվյալները որոշվում են յուրաքանչյուր ամսվա 15-ի կեսօրվա համար]

Հ/Հ	Աշխարհագրական լայնություն ⁰ հս.լ.	Բարձրությունն ըստ ամիսների ⁰											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1.	38	30.7	39.0	49.7	61.6	70.7	75.3	73.6	66.3	55.3	43.7	33.7	28.8
2.	40	28.7	37.0	47.7	59.6	68.7	73.3	71.6	64.3	53.3	41.7	31.7	26.8
3.	42	26.7	35.0	45.7	57.6	66.7	71.3	69.6	62.3	51.3	39.7	29.7	24.8

2.7. Մթնոլորտային օդ

Հայցվող տեղամասում և հարակից շրջանում մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա: Այն բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները ՀՀ ՇՄՆ, Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի ՊՈԱԿ – կողմից մինչև 10 հազար բնակիչ ունեցող բնակավայրերի համար առաջարկվում է վնասակար նյութերի հետևյալ ժամանակավոր ֆոնային կոնցենտրացիաները [Imeteomonitoring.am/page/15911](http://meteomonitoring.am/page/15911)՝ փոշի՝ 0.071 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.006, ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³, ազոտի օքսիդ՝ 0.023 մգ/մ³:

Տեղամասի տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը չի գերազանցում 10000 մարդ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՍԹԿ կազմում է 0.15 մգ/մ³, միջին օրեկան ՍԹԿ՝ 0.05 մգ/մ³:

2.8. Ջրային ռեսուրսներ

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ” ՊՈԱԿ-ի կողմից (նկ.10):

Հայցվող տեղամասը գտնվում է Քասաղ գետի ձախ ափին: Գետի երկարությունը 89 կմ է, ավազանի մակերեսը՝ 1480 կմ²:

Քասաղի ակունքները երեք գետակներ են, որոնցից ձախ օժանդակը՝ Քարաղբյուր, սկիզբ է առնում Փամբակի լեռների հարավային լանջերից, հոսում նախկին Ախուրյանի շրջանով: Աջակողմյան մյուս երկու՝ Դազբենդ և Ծաղկահովիտ օժանդակները սկիզբ են առնում Արագածի հյուսիսային լանջերից, հոսում Արագածի շրջանով, մեծ մասամբ հո-

սում են հարթ մարգագետիններով, և Ռյա Թագա գյուղի մոտակայքում միախառնվում աջ կենտրոնական հոսանքին:

Քասաղը վերին հոսանքում դանդաղահոս է և սակավաջուր, իսկ միջին հոսանքում դառնում է բավական ջրառատ ու արագահոս: Վերին հոսանքի շրջանում գետի հունը մոտ **8** ամիս ցամաքում է: Մշտական հոսք ունի սկսած Ապարանից, որտեղ նրա մեջ են թափվում հորդառատ աղբյուրներից գոյացած մի քանի ջրառատ գետակներ: Հոսում է հարավարևելյան ուղղությամբ և Ապարանի ջրամբարից հարավ, Ափնագյուղ գյուղից արևելք թեքվում է դեպի հարավ և, աջից իր մեջ առնելով Գեղարոտոս վտակը, մտնում է Քասաղի կիրճը:

Առավել ջրառատ և սրընթաց է Քասաղի միջին հոսանքը, հատկապես Աշտարակի և Օշականի մոտերքում, որտեղ գետի հովիտը մինչև **200** մ խորության հասնող ձոր է: Օշական գյուղից ցած՝ Քասաղը դուրս է գալիս Արարատյան դաշտ և, աջից իր մեջ ընդունելով Ամբերդ վտակը, գետաբերանային մասում բաժանվում է մի քանի բազուկների և ձախից միանում է Սևջուրին:

Ստորին հոսանքում՝ Արարատյան դաշտի սահմաններում, Քասաղի ջրերը գրեթե ամբողջովին օգտագործվում են շրջակա գյուղերի ցանքատարածությունները և այգիները ոռոգելու համար: Այդ է պատճառը, որ այստեղ ամռան ամիսներին **[ջրի ամենաուժեղ գոյորշիացումների շրջանում]** Քասաղը խալառ ցամաքում է:

Քասաղի ջրերը ամբարվում են Ապարանի ջրամբարում և օգտագործվում ոռոգման նպատակով: Մնումը ձնանձրևային է **(76 %)**, հորդանամ է ապրիլ-հունիս ամիսներին: Գլխավոր վտակներն են Գեղարոտը, Շաղվարդը և Ամբերդը: Ջուրը մաքուր է, նախկինում ձկնառատ էր:

Ապարանի արհեստական ջրամբարը կառուցված է Քասաղի վերին հոսանքում՝ Քուչակ և Եղիպատրուշ գյուղերի մինչև (նկ.**1111**, 2):

Կառուցվել է **1962-1967** թթ-ին Յոլակ Հակոբի Գևորգյանի կողմից: Մակերեսը **79** քառակուսի կիլոմետր է, ընդհանուր ծավալը՝ **91** միլիոն խորանարդ մետր, օգտակարը՝ **81** միլիոն խորանարդ մետր, ջրթողունակությունը վայրկյանում **18** խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50 մ, երկարությունը՝ 200 մ **[3]**:

Մնվում է Քասաղ գետի, Լուսագյուղ, Վարդենիս, Թթուջուր, Եղիպատրուշ, Քուչակ գետակների և մթնոլորտային տեղումներից: Չմնանը սառցակալում է: Օգտագործվում է ոռոգման համար: Ջուրը տրվում է նախկին Աշտարակի, Էջմիածնի շրջաններին: Ջրամբարի հիմնական ձկնատեսակը տեղական կողակն է: Այստեղ բուծվել է նաև Սևանա լճի իշխանը, սիգր և ծածանը: Վերջին տարիներին այստեղ բուծվել է նաև խեցգետինը: Շրջակայքում կառուցվել են հանգստյան գոտիներ: Ջրամբարի ջրերի տակ են մնացել Քասաղ, Չովունի գյուղատեղերը, որոնց բնակիչները վերաբնակեցվել են Երևանի շրջակայքում: Նախկին Չովունի գյուղում ջրի սահմանագծից **1967** թ-ին հանվել և անվտանգ տեղ են փոխադրվել **V** դարում կառուցված Սուրբ Վարդան և Թուխ Մանուկ փոքրաչափ եկեղեցիները: **IV** դարում կառուցված Պողոս-Պետրոս բազիլիկ տաճարը տարեկան **3-4** ամիս մնում է ջրային տարածքի մեջ:


Տեղամասին ամենամոտիկը Արագետն է, **[Արայի գետ, Ղարաջորան, Չալի-ձոր]**, Հրագդանի աջ վտակն է: Սկիզբ է առնում Շաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջերից՝ **2700** մ բարձրությունից: Երկարությունը **17** կմ է, ջրհավաք ավազանը՝ **64** կմ**Ա**

Գետահովիտը վերին հոսանքում **V**-աձև է, Բուժական գյուղի շրջակայքում ընդարձակվում է՝ վերածվելով կանիոնի: Մնումը հիմնականում ձնանձրևային **(73%)** է, վարարումը՝ ապրիլ-մայիսին: Տարեկան միջին ծախսը **0,4 մալ** է: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով **[3, 4]** :

Հայցվող տեղամասից մինչև Արագետի հունը ընկած ամենամոտ հեռավորությունը կազմում է **3,4** կմ: Քասաղ գետը գտնվում է հայցվող տեղամասից **3,7** կմ հեռավորության վրա: Քասաղ գետի ձախափնյա վտակներից մեկը, որը ձևավորվում է Երևջատափ գյուղի մերձակայքի մակերևութային ջրերից հայցվող տեղամասից գտնվում է **2,5** կմ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասում իրականացվելիք ցանկացած երկրաբանական աշխատանք շրջանի ջրային ռեսուրսների վրա որևէ կերպ ազդեցություն չի կարող ունենալ:
 Հայցվող տեղամասում մակերևույթային և ստորերկրյա ջրային հոսքեր առկա չեն:

**ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
 ԶՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ**



Նկ.10: Քասաղ գետի ավազանի մակերևույթային ջրերի մոնիտորինգի դիտացանց:



Նկ.11: Ապարանի ջրամբարի համայնապատկերը:

2.9. Հողեր

Հայցվող տեղամասի շրջանում տարածված են կրագերծված խորքային կարբոնատային սևահեղեր, անտառային դարչնագույն կրագերծված տափաստանացված և անտառային դարչնագույն կրագերծված խճաքարային հղերը **(նկ.12)**:

Հողառաջացնող ապարների լիթոլոգիական կազմը ավազներ և կավավազային խճաքարեր են խճավազով և գլաքարերով: Ըստ էռոզացվածության հողերն ունեն **4**-րդ կարգ, թույլ էռոզացված են: Օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, վարելահողեր և բազմամյա տնկարկներ են:

Գտնվում են չափավոր տաք, փոփոխական խոնավությամբ կլիմայական ու չոր ծառաթփուտատեսակներով հարուստ բոխու, կաղնու, թխկու անտառածածկոցի պայմաններում: Անտառային դառչնագույն հողերը բնորոշվում են կավայնացմամբ, զգալի քարքարոտությամբ, կավավազային մեխանիկական կազմով:


- Հումուսի պարունակությունը **4-6 %** է
- ունեն չեզոք կամ թույլ հիմնային (**pH = 7-8,2**) ռեակցիա
- միջին և միջինից բարձր կլանունակություն (**30- 44 մգ/Ա/լ**)
- կարբոնատների զգալի պարունակություն
- բարենպաստ ջրաֆիզոլոգիական հատկություններ:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (**pH**-ը տատանվում է **7**-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում **Ca**-ով և **Mg**-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (**0.15-0.35%**), ֆոսֆորական թթվով (**0.15-0.26%**) և կալիումով (**1-2%**):

Տիպիկ սևահողերի **A** հորիզոնում հումուսի պարունակությունը տատանվում է **4.5-9.0%** սահմաններում: Հումուսը հարստացված է համախառն ազոտով (**C:N= 9-12**), ակտիվ բաղադրիչներից գերակշռում են հումինաթթուները: Կլանված կատիոնների գումարը **100** գ հողում կազմում է **35-45** մէկվ:

Հողակալային կատիոններից գերակշռում է կալցիումը:

Սևահող արային կարբոնատային հողերի քիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են աղյուսակ **13**-ում:




Նկ.12: Հայցվող տեղամասի շրջանի հողերի սխեմատիկ քարտեզ(հատված ՀՀ Ազգային ստլասից)

Այս հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա:

Հումուսի պարունակությունը **1,5-2**-ից մինչև **4-6%** է: Հողայն լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (**15-25** մ.էկվ **100** գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է: Նախատեսվող գործունեության համար հայցվող հողերը գյուղատնտեսական նշանակության արտավայրեր են: Հողաբուսական շերտը տեղամասում ունի ոչ համատարած տարածում, դրա հզորությունը կազմում է **0-0,4**մ, միջին **0,2**մ:

Արագածոտնի մարզի ուսումնասիրված հողերում գերազանցում են քրոմի պարունակությունը՝ **12,0-15,0** անգամ, ցինկի պարունակությունը՝ **7,1-19,1** անգամ, արսենի պարունակությունը՝ **6,0-148,9** անգամ, պղնձի պարունակությունը՝ **9,6-29,0**

անգամ, նիկելի պարունակությունը՝ **6.7-18.2** անգամ: Հողերի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքները ներկայացված են գրաֆիկների տեսքով (նկ.13):



Նկ.13: Արագածոտնի մարզի հողերի և ջրի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքները:

Հանքավայրի մերձակա հողերը **4**-րդ կարգի էոզիականության աստիճան ունեն, արմատական ապարները **70%**-ից ավել մերկացվածություն ունեն, հայցվող տեղամասի մերկացվածության աստիճանը հասնում է **90%**:

Աղյուսակ **13**

Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնները և Խորությունը, սմ	Հումուր, %	CO ₂ , %	Ազոտ, %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում
1	2	3	4	5	6
Մովորական (կարբոնատային) սևահողեր	A1 0-15	4.32	0.5	0.34	37.2
	A2 15-29	2.77	0.6	0.23	36.1
	B1 29-45	2.56	0.6	0.18	29.2
	B2 45-62	2.09	1.6	0.15	37.2
	C 62-80	1.99	1.7	0.15	24.8
Ալրային կարբոնատային	A1 0-23	6.67	չկա	0.34	33.4
	A2 23-43	6.59	չկա	0.32	37.3
	B1 43-68	1.64	չկա	0.20	28.5
	B2 68-83	1.2	8.9		19.8
	C 83-100	0.90	40.3	0.19	-

Հայցվող տեղամասի հողերը կրագերծված խորքային կարբոնատային սևահողեր են: Տեղամասի մեծ մասը գուրկ է հողային ծածկույթից: Տուֆերը մերկացած են: Տեղամասից հյուսիս (հայցվող տեղամասի սահմաններից դուրս) հողաբուսական շերտի հզորությունը մեծանում է մինչև **0,5**մ:

2022թ.-ին Ծողակնի տուֆերի հանքավայրի շրջանում թիվ **ԵՀԹ-29/23** ընդերքօգտագործման իրավունքի շրջանակներում, ՄԵՎԱՐՏԻ ՄՊ Ընկերության կողմից իրականացվել է երկրաբանական ուսումնասիրությունների ծրագրով նախատեսված շրջակա

միջավայրի վրա ազդեցությունների գնահատման մոնիթորինգ, որի ժամանակ ի թիվս այլ աշխատանքների կատարվել է նաև հողի նմուշառում, որի քիմիական կազմի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ **14**-ում: Աղյուսակ **13**-ում և **14**-ում բերված ցուցանիշները ընդունվել են ելակետային: Հետայսու իրականացվելիք հողի մոնիթորինգի տվյալները կհամեմատվեն դրանց հետ:

Աղյուսակ 14

Ապար կազմող և միկրո տարրերի պարունակությունները հողի նմուշում

Նմ. համարը	Ապար կազմող տարրերի պարունակությունները, %									
	SiO ₂	Fe ₂ O ₃	TiO ₂	Al ₂ O ₃	CaO	MgO	SO ₃	Na ₂ O	K ₂ O	ԿՇՊ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
3	61.66	3.10	0.48	17.55	3.41	2.77	<0.10	4.44	3.91	2.34
Միկրոտարրերի պարունակությունները										
	Ni	Co	Cu	Zn	Pb	Au	Ag	Cd	As	Cr
12	0,001	0,001	0,012	0,008	0,004	հետք	0,2գ/տ	0,002	0,004	0,002

Հայցվող տեղամասից հյուսիս-արևելյան և արևելյան մասում են գտնվում Շողակնի տուֆերի հանքավայրն ու նրա արևելյան տեղամասը, որտեղ ռելիեֆի բնականոն իրադրությունը խախտված է արդյունահանման աշխատանքներով: Ներկա պահին նշված հանքավայրերը չեն շահագործվում:

Հայցվող տեղամասի ռելիեֆը խախտված չէ, հողերն աղտոտված չեն:

Համաձայն կադաստրի կոմիտեի **e-cadastream** էլեկտրոնային հարթակից ստացված տեղեկատվության, հայցվող տեղամասի հողերը հանդիսանում են ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր **(տեքստ հավելված)**:


Հողօգտագործման հարաբերությունները սահմանվում են ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.10.Բուսական և կենդանական աշխարհ

Այս բաժնում ներկայացվող նյութը կազմված է շրջանի կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ հասանաելի գիտական հրապարակումների, արտադրական և ՇՄԱԳ հաշվետվությունների, ինչպես նաև դաշտային այցելությունների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա **[15-35]**:

Ուսումնասիրվող շրջանը մտնում է Ապարանի ֆլորիստիկ շրջանի մեջ **(նկ.14)**:

Բուսական աշխարհի բազմազանությամբ ամենահարուստն է Հայաստանում: Այստեղ գրանցված են մոտ **650** տեսակի անանոթ բույսեր, որոնք կազմում են Հայաստանի բուսականության **20 %** - ը: Արա լեռը մեծ տարածք է զբաղեցնում, այդ իսկ պատճառով բազմազան է նաև ռելիեֆը: Կիսանապատներին հաջորդում են տափաստանները, իսկ մասնատված ձորակներում հանդիպում են անտառապատ տարածքներ:



Նկ. 14. Հայաստանի ֆլորիստիկ շրջանները (Таманян, Файсуй, 2009): Սևանի ֆլորիստիկ շրջանը 6-րդ է:

2.10.1. Բուսական աշխարհ

Տեղանքը ընդգրկված է Ապարանի ֆլորիստիկ շրջանի կազմում: Շողակն-Երնջատափ-Բուժական հատվածում բնական բուսածածկի հիմնական տիպը բնորոշվում է լեռնաբսերոֆիլ բուսականությամբ՝ Փրիզանոիդ թփերի մասնակցությամբ՝ **Amygdalus fenzliana (Fritsch) Lipsky**, **Cerasus incana (Pall) Spach**, **Rhamnus pallasii Fisch. Et Mey.**, **Celtis glabrata Stev. ex Planch.** տեսակներ մասնակցությամբ **Astragalus**, **Acanthomon**, **Acanthophyllum**, **Onobrychis cornuta (L.) Desv.**, **Salvia dracocephaloides Boiss**, **Thymus kotschyanus Boiss et Hohe n.** (նկ.15):

Ամիչապես երևակման տարածքը գործնականում գուրկ է բուսածածկից, որի պատճառ են հանդիսանում մակերևույթին մերկացող հողմնահարված տուֆերն ու պեմզային ավազները:

Կարմիր գրքում գրանցված տեսակներ գտնված չեն, այս մասին տեղեկանում ենք նաև հարևանությամբ արդյունահանվող Նորաշենի պեմզայի հանքավայրի ՇՄԱԳ հաշվետվությունից:



Նկար 15: ՀՀ Արագածոտնի մարզի հարավ-արևելյան հատվածի բնական բուսածածկի տիպերի սխեմատիկ քարտեզ

2.10.2. Կենդանական աշխարհ

Հանքավայրի տարածքը նախկինում ծառայում էր որպես արոտավայր, սակայն աղքատիկ բուսականությունը և հարևանությամբ շահագործվող պեմզաների հանքավայրի տարածքի յուրացումը՝ տեղանքը դարձրել են գործնականում անօգտագործելի է: Կենդանական աշխարհը շատ աղքատիկ է:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից այստեղ հանդիպում են սողունների բազմաթիվ տեսակներ, որոնցից են գյուրգան, մողեսանման օձը (**Maipolion monspessullanus**) սահնօձի տարբեր տեսակներ, ոսկեգույն մաբույան (**Ma buya aurata**), երկարատու սցինկը (**E umeces schneideri**) և այլն (նկ.16):

Տարածքի յուրացվածության բարձր աստիճանը գործնականում բացառում է վայրի կենդանիների համար ապրելավայրի հնարավորությունը, այդ թվում նաև Կարմիր գրքային տեսակների:

Ըստ , Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կոնսորնի **ՊՈԱԿ-**ի հայցվող տեղամասի տարածքում հանդիպում է Մեծ Ենթարձիվ Կարմիր գրքում գրանցված **Aquila clanga Pallas** տեսակը: Այս տեսակը քիչ քանակությամբ հանդիպող, խոցելի տեսակ է, որը հանդիպում է Հայաստանում հիմնականում չուի ընթացքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում **(ver. 3.1) ,Vulne rablet C2a(ii)** կարգավիճակով: ԲՊՄՄ Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես , Խոցելի **V U C2a (ii):** (Նյութի աղբյուրը՝ [Ec onews.am](http://Ec.onews.am))

ՀՀ ՇՄՆ , Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կոնսորնի **ՊՈԱԿ-**ի կողմից առաջարկվել է սույն բաժնում ներառել նաև երկու կարմիրգրքային միջատների տեսակներ՝ Ապոլլոն (**Parnassius apollo**) և Ալեքսանոր առագաստաթիթեռը (**Papilio alexanor**): Վերջիններս գրանցված են Հայաստանի կարմիր գրքում:






ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ

Ողնաշարավորներ

 Վայրի ոչխար (մուֆլոն)	 Շերտավոր բորենի	 Թխակապույտ աղավնի
 Բեզարյան այծ	 Շնագայլ	 Կռնչան բաղ
 Եվրոպական այծյամ	 Ջրասամույր	 Արծաթափայլ որոր
 Ազնվացեղ եղջերու	 Գորշուկ	 Միջերկրածովյան կրիա
 Վայրի խոզ	 Մացառախոզ	 Գյուրգա
 Գորշ արջ	 Մշկամուկ	 Մխտորագորտ
 Ընձառյուծ	 Դահճակուղբ	 Սովորական տրիտոն
 Լուսան	 Սկյուռ	 Սիգ
 Եղեգնակատու	 Նապաստակ	 Անտառային կատու
		 Կաքավ

Անողնաշարավորներ


 Անատամ	 Խեցգետին	 Խաղողի խխունջ
--	--	--

Նկ.16: Հայցվող տեղամասի շրջանի կենդանական աշխարհի բաշխվածության սխեման

2.11. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայցվող տեղամասի մերձակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Մոտակա ԲՀՊՏ-ը՝ «Արզականի - Մեղրածորի» պետական արգելավայրն է, որից հեռավորությունը կազմում է մոտ **10** կմ:

Անտառային տարածքները գտնվում են հայցվող տեղամասի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան շրջաններում, որոնք համապատասխանաբար գտնվում են **0.75** և **1.55** կմ հեռավորությունների վրա (նկ.17) :



Նկ. 17: Հայցվող տեղամասի և արտառային հողերի տեղադիրքը սխեման: Կապույտ գծով նշված են անտառային հողերի մոտավոր (քանի որ կոորդինատներ չկան) սահմանները:

Աշխարհագրություն

Արագածոտնի մարզն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիսարևմտյան մասը **1950** մ-ից մինչև **4090** մ բացարձակ բարձրությունները՝ Արագածի լեռնազանգվածի, Փամբակի, Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերն ու լեռնանյուղերը, Ապարանի դաշտը, Թալինի սարավանդը՝ Արտենի, Իրինդ, Ծաղկասար ու այլ հրաբխային կոներով, և Քասաղի վերին ու միջին հոսանքների ավազանը:



Տիրապետում են կտրտված նախալեռնային, ու լեռնային մակերևույթը, ռելիեֆի հրաբխային ու էրոզիոն ձևերը: Փամբակի ու Սպիտակի լեռնանցքերով կապվում է Լոռու մարզին: Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (**4090** մ.) և Ծաղկասար (**2219** մ.), Իրինդ (**2050** մ.), Արտենի (**2047** մ.) հանգած հրաբուխները:

Արագածոտնը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշտաֆտային գոտիները: Գերակշռում է լեռնատափաստանային ու լեռնամարգագետնային լանդշաֆտը: Տեղ-տեղ կան լեռնանտառային տեղամասեր:



Կան բազալտի, անդեզիտաբազալտի, տուֆի, պեռլիտի, հրաբխային խարամի, պեմզայի ու անուշահամ ջրերի պաշարներ: Վերջինների ելքերը դուրս են գալիս Արագածի լանջերն ու գետահովիտները: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը:

Մարզի տարածքում է կազմավորվում Քասաղ գետը՝ Ծաղվարդ, Ծաղկաշատ, Գեղարոտ, Ամբերդ, Արագածոտն, Նիգատուն և այլ վտակներով, Թուրքիայի հետ սահմանով հոսում է Ախուրյան գետը: Արագած լեռնազանգվածի սարավանդի վրա են Ամբերդի, Լեսինգի և Քարի սառցադաշտային լճակները: Տարածքում են Մաստարայի հեղեղատի համակարգը, Ապարանի, Արագածի և այլ ջրամբարներ, Արզնի-Շամիրամ ոռոգման համակարգի մեծ մասը, Թալինի ջրանցքը:



Ջրային պաշարներից սնվում են Ապարան-Երևան և Ապարան-Մայիտակ ջրատարները: Մարզում առկա է **29** արհեստական ջրամբար՝ ամենամեծը Ապարանի ջրամբարն է:

Մարզն այքի է ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ: Ըստ բարձրության տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների քանակը խիստ տարբեր են: Եթե տարվա ամենատաք ամսվա՝ հուլիսի միջին ջերմաստիճանը լեռան ստորոտում լինում է **+24°C**-ից ոչ պակաս, ապա բարձրլեռնային գոտում չի բարձրանում **+6°C**-ից: Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են **850-900** մմ, իսկ համեմատաբար ցածրադիր (**1000** մ) բարձրություններում՝ **300**մմ: Արարատյան դաշտավայրին հարող հատվածներում ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ:

Բնակչություն

Արագածոտնի մարզը Հայաստանի միջինից ցածր բնակեցված մարզերից մեկն է, բնակչության խտությունը կազմում է **47** մարդ/**1** ք.կմ: Մարզում բնակվում է շուրջ **124,7** հազ. մարդ /**01.07.2020**թ./, կամ ՀՀ բնակչության **4.3%** -ը:

Մարզի քաղաքային բնակչությունը՝ **3** քաղաքներով, կազմում է **28.3** հազար մարդ կամ **22.4%**: Գյուղական բնակչությունը կազմում է **100.2** հազար մարդ կամ **77.6%** : Բնակչության թվաքանակում տղամարդիկ կազմում են ընդհանուր բնակչության նկատմամբ՝ **49.4%**, իսկ կանայք՝ **50.6%**-ը: Բնակչության տարիքային կազմի տեսանկյունից մարզի բնակչությունը հարաբերականորեն ավելի երիտասարդ է հանրապետական ցուցանիշից (**50%**)՝ մինչև 35 տարեկան բնակիչները 54% են կազմում:

Բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, բնակչության խտությունը կազմել է՝ **36-89** մարդ/ **1** ք.կմ, այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ **64%** մակերեսով կազմում է մարզի **46.5 %**: Ամենացածր խտությունը՝ Արագածի տարածաշրջանում է կազմել՝ **3** մարդ/ **1** ք.կմ և Թալինի տարածաշրջանում՝ **30** մարդ/ **1** ք.կմ):

Ազգաբնակչության **93.7%** -ը հայ են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ (**4%**), որոնք բնակվում են ինչպես խառը՝ հայերի հետ, այնպես էլ առանձին գյուղերում: Եզդիաբնակ են մարզի **114** համայնքներից **20**-ը (**8** համայնք՝ Թալինի, 11՝ Արագախի, 1՝ Աշտարակի տարածաշրջաններում): Բացի եզդիներից մարզում բնակվում են նաև ռուսներ (**0,13 %**) և քրդեր (**0,5%**):



Քաղաքային համայնքների թիվը՝ **3** համայնք /Աշտարակ, Ապարան, Թալին/,
 Գյուղական համայնքների թիվը՝ **111** համայնք:
 Գյուղական բնակավայրերի թիվը՝ **117** բնակավայր:

Արագածոտնի տեսարժան վայրեր

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով. այստեղ հաշվառված է 1796 հուշարձան, որից շուրջ **400**-ը գտնվում է պետական պահպանման տակ:



Այստեղ են գտնվում մի քանի վանական համալիր, կիկլոպյան, մ. թ. ա. **III-I** հազարամյակի բնակատեղիներ, ուրարտական ամրոցներ, նշանավոր եկեղեցիներ, խաչքարեր, բնության հուշարձաններ, գյուղատեղիներ: Մարզում հայտնաբերվել են քարի ու բրոնզի դարերի նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ:

Մասնավորապես Արագածոտնում են գտնվում պալեոլիթ-նեոլիթյան (մ.թ.ա. **500.000-7.000** թթ) մի քանի հնավայր, ժայռապատկերներ, վիշապներմեզալիթյան կառույցներ (մ.թ.ա **V-I** հազարամյակներ՝ Արագածի լանջեր, Ապարան, Գեղարոտ, Ներքին և Վերին Նավեր, Օշական):

Մարզի տարածքում են Մուշեղ Գալշոյանի (Կաթնաղբյուր), Գևորգ Չավուշի (Աշնակ) տուն – թանգարանները, Հայոց տառարձանների պուրակը (Աշտարակ-Ապարան մայրուղու հարևանությամբ՝ Արտաշավան գյուղի մոտ) և նաև:
 ք. Աստվածածին) (**V II** դ.)

Մարզի տնտեսությունը և հասարակական կյանքը

«Արագածոտնի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են:



Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ:

2022թ. մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը կազմել է ընդհանուր բնակչության **62.7%** -ը: Աղքատության մակարդակը մարզի բնակչության **16,1%** է: Գործազրկության խնդիրը ավելի խիստ է քաղաքային համայնքներում:

Մարզի առողջապահական համակարգում գործում են **25** բուժհաստատություններ՝ **6** բժշկական կենտրոն, **15** ամբուլատորիաներ և **1** առողջության առաջնային պահպանման կենտրոն, **3**-ը մասնավոր:



Կրթական ոլորտում գործում է **122** հանրակրթական ուսումնական հաստատություն, **1** հատուկ դպրոց, **28** նախակրթական հաստատություն, **10** երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, **2** պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական, **1** պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Մարզում գործում է **4** մարզադպրոց՝ Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքային համայնքներում և Քուչակ գյուղական համայնքում:

Այստեղ կա **71** գրադարան, որոնցից **1-ը**՝ մարզային, **3-ը**՝ քաղաքային, **65-ը**՝ գյուղական, **1-ը**՝ մանկական, **1-ը**՝ մարզային կենտրոնական: Գործում է **2** հուշային թանգարան:

Մարզը հանրապետության գիտական խոշոր կենտրոններից է: Աշտարակի տարածաշրջանում գործում են ՀՀ Գիտությունների ակադեմիայի **6** գիտահետազոտական ինստիտուտ և կոնստրուկտորական բյուրո: Դրանց թվում է նաև Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանը, , Արագածն քարձրվեռն. օդերևութաբանական կայանը:

Մարզն ունի հանգստյան գոտիների լայն ցանց, որոնք հիմնականում տեղավորված են Բյուրականի անտառային գոտում :

Տրանսպորտ և կապ

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող **3** ավտոխճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան–Աշտարակ – Մայիտակ և Երևան – Արմավիր – Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին շուրջ **30** կմ: Մարզով է անցնում կառուցվող Հյուսիս – Հարավ միջպետական ճանապարհը: Արագածոտնի մարզում գործող օդանավակայաններ չկան:



Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, բնակավայրերը **98%-ով** ապահովված են ինտերնետ ծածկույթով /օպտիկամանրաթելային և եթերային-շարժական/: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի բնակավայրերի **88%-ը**: Մարզի **114** համայնքներում գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի համայնքների **100%** ծածկույթը:

Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Այստեղ հեռարձակվում են **8** հանրապետական նշանակության և **1** տեղական (կաբելային) հեռուստատեսությունների ծրագրերը: Հեռարձակվում է նաև «Հանրային ռադիոն», որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

3.2.Շողակն համայնքը և Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Շողակն, գյուղը գտնվում է Թեղենյաց լեռների լանջին, Քասաղ գետի ձախ կողմում **(նկ.19)**: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ **22** կմ հյուսիս-արևելք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ **2000** մ:

Գյուղը հիմնադրվել է **1830**-ական թվականներին, Շողակն է վերանվանվել **2006** թվականի հուլիսի **4**-ին: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

Գյուղում է գտնվում **13**-րդ դարի, Թուխ Մանուկե և **9-10**-րդ դարի Սուրբ Թադևոս Առաքյալ մատուռները, **5-6**-րդ դարերի Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ **15** կմ հյուսիս-արևելք՝ **18-19**-րդ դարերի, Օսկոյի գյուղատեղին:

Մակերես՝ **15.93** կմ², բնակչության թիվը՝ **105**: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են **51%**, կանայք՝ **49%**: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են **27%**, աշխատունակները՝ **46%**, հետաշխատունակները՝ **27%**: Գյուղն ունի առկա **42** տնտեսություն: Ունի տարրական դպրոց, գրադարան, բուժկետ կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Սեփականաշնորհված հողերը զբաղեցնում են համայնքի ընդհանուր մակերեսի մոտ **13%** :

Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերի մեջ մեծ է արոտավայրերի տեսակարար կշիռը՝ **414** հա, ապա վարելահողերը՝ **136** հա: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելուրվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: Հայցվող տարածքը արդյունաբերական նշանակության արոտավայր է:

Հայցվող տեղամասը ունի այգեգործական նշանակություն:

Շողակնի տուֆի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը և նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքի բնակիչներին: Հանրային քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը ներկայացվում է նախնական գնահատման հայտին կից:



Նկ.19: Ծողակն գյուղի համայնապատկերը <https://www.facebook.com/AdventureArmenia/posts/2690553384384984>

3.3.Պատմության, մշակութային և բնական հուշարձաններ

Այստեղ ներկայացվում է Ծողակն, Երնջատափ և Բուժական համայնքների տարածքում գրանցված պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը **(աղ.15-17) :**

Աղյուսակ **15**

ՀՀ Կոտայքի մարզի Բուժական բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, ըստ ՀՀ Կառավարության **2002 թ.** հաստատված ցանկի:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Ամրոց , Զյորոլիևի	9-15 դդ.	գյուղից 3 կմ հս, Թեղենյաց վանքից հս	Ծաղկունյաց լեռնաշարը եզրափակող կոնաձև ժայռերից մեկի գագաթին
Բացօթյա կայան	հին քարի դար (աշելմուստիև)	Գյուղից 4 կմ հվ-ամ, Արայի լեռան լանջին	
Գյուղատեղի	17-19 դդ.	գյուղի հս եզրին, Թեղենյաց վանք տանող ճանապարհի աջ կողմում	
Գյուղատեղի	13-17 դդ.	գյուղից 1.5 կմ հվ, Արա գետի աջ ափին, հրվանդանի հս-աե եզրին	, Արուխանանև վայրում
Եկեղեցի	13-14 դդ.	գյուղատեղիի	ավերակ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
		կենտրոնում	
Գավիթ	13-14 դդ.	գյուղատեղիի կենտրոնում	ավերակ
Գյուղատեղի	16-18 դդ.	գյուղից 1.5 կմ հվ-ամ, Արագյուղ-Բուժական ճանապարհից հս, հեղեղատի աջ ափին	, Խալիֆ Ալիբեկ ե վայրում
Գյուղատեղի	17-19 դդ.	գյուղից 2 կմ հվ	, Սուտյի խարաբա ե վայրում
Գյուղատեղի	17-19 դդ.	գյուղի աե մասում	, Քիրաջու ե վայրում
Խաչքար	10-11 դդ.	գյուղատեղիի հս եզրին	րնկած է գետնին
Կոթող	6-7 դդ.	գյուղատեղիի հս եզրին	րնկած է գետնին
Գյուղատեղի	10-19 դդ.	գյուղից 1 կմ հվ-աե, Արա գետի ձախ ափին	, Քյալաշքենդ ե վայրում
Եկեղեցի	10-13 դդ.	գյուղատեղիի կենտրոնում	ավերակ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1.5 կմ հվ-աե	, Քյալաշքենդ ե գյուղատեղիից աե
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1977 թ.	գյուղի մեջ	
Եկեղեցի Սբ. Մարիամ Աստվածածին	7 դ.	գյուղից 2-3 կմ հս	
Գերեզմանոց	13-14 դդ.	եկեղեցու շրջակայքում	
Խաչքար	12-13 դդ.	եկեղեցու մոտ եկեղեցու հվ-աե անկյան մոտ	գլխիվայր խրված հողի մեջ
Խաչքար	12-13 դդ.	եկեղեցու մոտ գլխիվայր հենած եկեղեցու հս պատին	ստորին ձախ անկյունը կտրված
Խաչքար	13-14 դդ.		
Վանական համալիր Թեղենյազ	7-15 դդ.	գյուղից 3 կմ հս	անտառի բացատում
Եկեղեցի	7 դ.		
Եկեղեցի Կաթողիկե	11-13 դդ.		
Գավիթ	1207 թ.		
Արձանագրություն	1207 թ.	գավթի հս պատին	շինարարական` գավիթի կառուցման մասին
Խաչքար	12-13 դդ.	հենած հս պատին	հողմնահարված
Խաչքար	13 դ.	գավթի ներսում	վերին հատվածը
Խաչքար	13 դ.	գավթի ներսում	ագուցված է եղել պատի մեջ
Խաչքար Թողութի	1291 թ.		պահպանվել է պատվանդանը
Գրատուն	13 դ.		
Միաբանների կացարաններ	13-18 դդ.		

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Մեղանատուն	13 դ.		
Սյունասրահ [գավիթ]	13 դ.		
Իսաչքար	10-13 դդ.		
Իսաչքար	10-13 դդ.		
Գերեզմանոց	10-17 դդ.	վանքից 200 մ հս, անտառի մեջ	
Իսաչքար՝ Էլպեքի, Ստեփանոսի	13 դ.		ստորին հատվածը, արձանագիր
Իսաչքար՝ Մխիթար վարդապետի	1211 թ.		որմնափակ, արձանագիր
Իսաչքար	13 դ.		պատվանդանի վրա
Իսաչքար	13 դ.		հատված
Իսաչքար	13 դ.		վերնամասը, ընկած է գետնին
Իսաչքար	13 դ.		ստորին հատվածը, ընկած է գետնին
Իսաչքար	13 դ.		հատված
Իսաչքար	13 դ.		հատված
Տապանաքար	1089 թ.		երկկանջ, արձանագիր
Տապանաքար՝ Գորգ քահանայի	13 դ.		երկկանջ, արձանագիր
Տապանաքար՝ Սբ. Ճգնավոր Հայրապետ քահանայի	13 դ.		հարթ, արձանագիր սալատապան
Տապանաքար՝ Յովհանն կրոնավոր Լոռեցու	13 դ.	կրթություն	երկկանջ, արձանագիր
Գերեզմանոց	16 դ.	վանական համալիրից 40 մ հեռու	
Տապանաքար	16 դ.		ձիակերպ
Տապանաքար	16 դ.		խոյակերպ
Մատուռ	6-7 դդ.	վանքից 30 մ հս-աե, ձորակի ամ կողմում	
Վիշապաքար	Ք.ա. 5-3 հազ.	գյուղից 1.5 կմ ամ, ճանապարհից աջ	ձկնակերպ
Վիշապաքար	Ք.ա. 5-3 հազ.	գյուղից 1.5 կմ ամ, ճանապարհից ձախ	ձկնակերպ

Երնջատափի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները ներկայացվում է ըստ
2002 թ. ՀՀ Կառավարության հաստատված ցանկի:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Ամրոց	մ.թ.ա. 3 հզ	հս-աե մասում	Նորաշեն տանող ճանապարհի աջ կողմում, մաքրիչ կյութերի գործարանի մոտ, բարձրադիր վայրում
Բնակատեղի	մ.թ.ա. 3 հզ		
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 3 հզ		
<u>Ամրոց , Երնջակե</u>	մ.թ.ա. 2-1 հզ, մջնդ	1 կմ հս-ամ	Հարթավան-Երնջատափ ճանապարհից ձախ, Քասախի ձախ ափին
Գերեզման , Ազնավուրի դամբարանե	10-15 դդ.	2 կմ ամ	ամառանոցներ տանող ճանապարհի ձախ կողմում, փոքրիկ բլրակի վրա
Գերեզմանոց	10-16 դդ.	հս մասում	պահպանվել է 2 կղզյակով
Եկեղեցի	մջնդ		հիմնավեր
Իսաքար	12-13 դդ.		բեկոր, դրված գլխիվայր, գերեզմանոցի միջին մասում
Իսաքար	13 դ.		ընկած գետնին, բեկոր
Իսաքար	15-16 դդ.		ամ եզրին, պահպանվել է միջնամասը
Իսաքար	16 դ.		հս-աե մասում, կոտրված կազմող՝ Հանես
Տապանաքար Իսաչատուրի	1595 թ.		կազմող՝ Հանես
Տապանաքար Սարգսի	1598 թ.		կազմող՝ Հանես
Տապանաքար Մկրտչի,...	1598 թ.		
Տապանաքար Ատոնի	16 դ. վրջ		
Տապանաքար Իսաչատուրի և Սարգսի	16 դ. վրջ		
Տապանաքար	17 դ. վրջ		արձանագիր
Տապանաքար Իսաչատուր Գասպարյանի	1703 թ.		
Գերեզմանոց	19-20 դդ.	ամ մասում	գործող գերեզմանոցի տարածքում
Գյուղատեղի , Դավոյիե	10-14 դդ.	2,5 կմ ամ	Քասախի կիրճում, Երնջատափ գետակի ձախ ափին
Գերեզմանոց	10-15 դդ.		
Գյուղատեղի , Լազգի աղբյուրե	10-15 դդ.	3 կմ ամ	ամառանոցներ տանող ճանապարհի աջ կողմում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	10-15 դդ.		գյուղատեղիի հս մասում
Դամբարանաբլուր	մ.թ.ա. 2-1 հզ	հվ-ամ մասում	ամառանոցներ տանող ճանապարհի աջ կողմում
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ	ամ մասում	գյուղի եզրին, Հարթավան-Երնջատափ ճանապարհի երկու կողմերում, ձգվում է մինչև նոր գերեզմանոցը
Եկեղեցի Սբ. Աստվածածին	12-13 դդ	գ. մ.	վրկնգ՝ 1901 թ.
Իսաչքար	1691 թ.		հվ պատին, ներքուստ
Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1975 թ.	գ. մ.	

Աղյուսակ **17**

ՀՀ Արագածոտնի մարզի երկրաբանական հուշարձանների ցանկը հաստատված **14** ՀՀ կառավարության **0**գոստոսի **2008** թվականի **N 967**-Ն որոշմամբ

№ ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բագալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Զարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին

Շողակն բնակավայրում է գտնվում **13**-րդ դարի, Թուխ Մանուկե և **9-10**-րդ դարի Սուրբ Թադևոս Առաքյալ մատուռները, **5-6**-րդ դարերի Սուրբ Աստվածածին եկեղեցին, իսկ **1,5** կմ հյուսիս-արևելք՝ **18-19**-րդ դարերի, Օսկոյիե գյուղատեղին:

Հայցվող տեղամասի մոտակայքում բնության և պատմամշակութային հուշարձաններ առկա չեն:

4. ԾՐԱԳՐՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԾՎԱԿԱՆԵՐԸ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի **2021** թվականի օգոստոսի **11**-ի **N 06**-Ն հրամանի **N 2** հավելվածի հրահանգի պահանջների պահպանմամբ:

Հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել տեղամասի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը, դիրքը, երկրաբանական-հետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը:

Տեղանքի ռելիեֆը իրենից ներկայացնում է հարթ մակերևույթ: Հետախուզումը իրականացվելու է մեխանիկական պլանակային եղանակով ուղղահայաց հորատմամբ: Ըստ երկրաբանական բարդության հանքավայրը պատկանում է առաջին խմբի **1գ** ենթախմբին (ըստ հերոհիշյալ հրահանգի), այն դիտարկվում է որպես հորիզոնական տեղադրված մարմին:

Արդյունաբերական կարգերով պաշարների եզրագծման համար հետախուզագծերի վրա հորատանցքերի միջև հեռավորությունը **A** կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է **100 - 200**մ: Քանի որ հայցվող տեղամասը չունի կանոնավոր երկրաչափական սահմաններ, ուստի հնարավոր չէ հետախուզական ցանցի սիմետրիկությունը պահպանել: Հորատանցքերը նախատեսվել են այնպես, որ ամբողջ տեղամասը հնարավոր լինի ուսումնասիրել և օգտակար հանածոն առավելագույնս եզրագծել:

Հորատման աշխատանքները իրականացվելու են չորս հետախուզական գծերով, որոնց միջև հեռավորությունը կլինի **71-129**մ: **2**-րդ, **5**-րդ, **6**-րդ և **10** -րդ հորատանցքերը հետախուզական գծերի վրա չեն տեղադրվում, սակայն դրանց հորատումը կարևոր նշանակություն է ունենալու տեղամասն ամբողջական ուսումնասիրելու համար:

Տեղամասում նախատեսված է հորատել **12** ուղղահայաց հորատանցքեր, յուրաքանչյուրը մինչև **5**գծ.մ:

Բացի հորատման աշխատանքներից ծրագրով նախատեսվում են նաև կատարել **1:1000** մասշտաբի տպո և երկրաբանական հանույթ: Հորատահանուկի նմուշարկում և փաստագրում:

4.1. Նախապատրաստական շրջան և ծրագրային աշխատանքներ

Նախապատրաստական աշխատանքներ չի նախատեսվում քանի որ, ընկերության մասնագետները ծանոթ են ֆոնդային և հրատարակված նյութերին ու ԳՈՍՏ երին: Պայմանագրային հիմունքներ կկազմվի աշխատանքային նախագիծ:

4.2. Տեղագրական աշխատանքներ

Նախատեսվում է հետախուզվող տեղամասի շուրջ **4**հա մակերեսի վրա կատարել **1:1000** մասշտաբի տեղագրական հանույթ: Տեղագրական հանույթի մակերեսը մի փոքր ավելի մեծ է վերցվում ամբողջական պատկեր ապահովելու համար:

Բոլոր հորատանցքերը, ճանապարհներն ու նախկինում կատարված փորվածքները գործիքի օգնությամբ տեղադրվելու են տոպոհիմքի վրա:

4.3. Երկրաբանահանության աշխատանքներ

Տեղամասի **1:1000** մասշտաբի տեղագրական քարտեզի հենքի վրա կատարվելու է երկրաբանական հանույթ:

4.4. Հորատման աշխատանքներ

Օգտակար հանածոի մարմնը նախատեսվում է ուսումնասիրել հորատանցքերով: Հորատման աշխատանքները կիրականացվեն այունակային հորատումով ուղղահայաց ուղղությամբ: Հորատումը կկատարվի **112** մմ տրամագծով կարծր համաձուլվածքի թագիկով: Անհրաժեշտ է ապահովել հանուկի **95%** - ից ավելի ելք:

Հորատվելու է **12** ուղղահայաց հորատանցք յուրաքանչյուրը մինչև **5** գծ.մ խորությամբ: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կլինի **60**գծ.մ: Հորատվող ապարներն ըստ հորատելիության աստիճանի համապատասխանում են **V** և **VI** կարգերի:

Հորատումը կատարվելու է **URB 2.5A (Zil -131)** տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի **4** տեղակայում և տեղահանում:

4.5. Փորձնական հանույթ

Հումքի ինքնարժեքն ու լեռնային զանգվածից բլեկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է իրականացնել տուֆի **100**մ³ ծավալով փորձնական արդյունահանում: Հումքը բլոկների տեսքով տեղափոխվելու է քարի մշակման արտադրամաս, որտեղ արտադրական պայմաններում կատարվելու է հումքի փորձարկում՝ սղոցում և մակերեսի հարթեցում:

Նախատեսվող փորձնական բացահանքն ունենալու է **10x2x5** մ չափեր՝ **10** մ-երկարություն, **2** մ առաջխաղացում և **5** մ բարձրություն (տուֆի շերտի ամբողջ հզորությամբ):

4.6. Հետախուզական փորվածքների փաստագրում

Երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը:

Փորվածքների փաստագրման ժամանակ անհրաժեշտ է ամրագրել [արձանագրել, ֆիքսել] ապարագրական կազմը, ներկառուցվածքը և մակատեսքը, դրանց ճեղքավորվածությունը և անջատելիությունը, հողմահարման աստիճանը, չփոփոխված, մասամբ հողմահարված և հողմահարված ապարների միջև եղած սահմանները:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել **1:100** մասշտաբով: Նախատեսվում է փաստագրել **60**գծ.մ հորատահանուկ:

4.7. Նմուշարկում

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից: Օգտակար հանքակուտակը բացող բոլոր հորատանցքերի հորատահանուկը պետք է նմուշարկվի:

Հորատանցքերից ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար վերցվում են **7-8** սմ երկարությամբ հորատահանուկի այունիկների փորձանմուշներ այնպիսի ընդհանուր երկարությամբ, որը բավականաչափ լինի փորձարկումների լրիվ և կրճատ ծրագրերով ապարանմուշների պատրաստման համար:

Լրիվ ծրագրով փորձարկումների համար հորատանցքերի հորատահանուկից վերցված ապարակտորներից հարկավոր է կտրել միատեսակ ձևի ու չափերի անհրաժեշտ քանակի ապարանմուշներ: Վերջիններիս պատրաստման ժամանակ պետք է ապահովել դրանց երկրաչափական ձևերի ճշտությունը [կանոնավորությունը] և նիստերի մակերևույթների լավ կցահղվումը, քանի որ այդ պայմանների չպահպանումը կարող է հանգեցնել քարի ամրության ցուցանիշների չիմնավորված իջեցմանը:

Տուֆի միներալոգիական-ապարագրական հետազոտությունների և քիմիական կազմի որոշումների համար փորձանմուշները պետք է վերցնել ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար վերցվող փորձանմուշների հետ միաժամանակ:

Սույն ծրագրի իրականացման համար նախատեսվում է վերցնել **17** նմուշ՝

1. ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար յուրաքանչյուր հորատանցքից մեկական նմուշ (ընդամենը **12** նմուշ),
2. քիմիական կազմի որոշման համար՝ **2** նմուշ,
3. ապարաբանական ուսումնասիրության համար՝ **2** նմուշ:
4. համախառն նմուշ **1** հատ

4.8. Լաբորատոր ուսումնասիրություններ

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների, Անալիտիկ ԳԲԸ-ի լաբորատորիաներում:

Վերցված ապարանմուշները ենթարկվում են՝

- ա. ֆիզիկամեխանիկական փորձարկումների,
- բ. միներալոգիական-ապարագրական կազմի և գեոագարոլոգիական հատկությունների,
- գ. քիմիական կազմի որոշումների

Անհրաժեշտ է տուֆերի համար որոշել հետևյալ ֆիզիկամեխանիկական հատկությունները.

1. Ծավալային զանգվածի խտությունը
2. Տեսակարար կշիռը
3. Միջհատիկային դատարկությունների ծավալը
4. Ապարի կտորում ծավալային կշիռը
5. Ապարի կտորի ծակոտկենությունը
6. Ջրագեցվածությունը
7. Խճի ծավալային զանգվածի խտությունը
8. Խճի Հատիկային կազմը
9. Ապարի սեղմման դիմադրությունը

Անհրաժեշտ է **2** ապարանմուշով որոշել լեռնային ապարների յուրաքանչյուր քարաբանական տարատեսակի քիմիական կազմը: Ապարանմուշներում պետք է որոշել հետևյալ միացությունների՝ **SiO₂, Fe₂O₃, Al₂O₃, SO₃, CaO, MgO** պարունակությունները և շիկացման դեպքում կորուստները:

Ապարանմուշների ապարագրական ուսումնասիրություններով անհրաժեշտ է արձանագրել հողմահարման գործընթացներով ապարի փոփոխության աստիճանը, առաջնային և երկրորդային միներալների քանակական փոխարարությունները:

4.9. Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական Ուսումնասիրություններ

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հորատանցքերի անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղագնում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով: Նման երևույթների առկայության կամ ջրատար հորիզոնների հայտնաբերման դեպքում

կկազմվի ծրագրի - լրացում դրանց ուսումնասիրման համար, որը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից:

5.ՈԱԿԻՈՄԵՏՐԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտակար հանաժողի ճառագայթահիգիենիկ հատկությունների գնահատման համար նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել ապարների ռադիոմետրական չափումներ:

Իբրև շինարար և երեսապատման քար հետախուզվող լեռնային ապարներին պետք է տրվի ճառագայթահիգիենիկ գնահատում՝ ըստ ՆՌԲ-96 կամ ՆՌԲ-99 , Ճառագայթային անվտանգության նորմերին:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար **15-20** օրը մեկ նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի (MKC-AT1117M) էտալոնացում և զգայունության ստուգում:

6.ՃԱՆԱԳԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՀՈՐԱՏՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև երևակման տեղամասը և տեղամասում ճանապարհների կառուցում և նորոգում չի նախատեսվում, քանի որ դրանք առկա են և բարվոք վիճակում են գտնվում: Չեն կառուցվելու նաև հորատման հարթակներ, քանի որ ռեզիլիենտ հարթ է, ինչը թույլ է տալիս առանց լրացուցիչ հողային աշխատանքների հորատման հաստոցը տեղակապել և հորատել:

7.ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կարող են առաջանալ երեք տիպի թափոններ.

7.1.Հորատման թագիկների թափոններ

Այս տիպի թափոններն առաջանում են հորատման ընթացքում թագազվիսիկների կարծր համաձուլվածքային հատվածի մաշվելու արդյունքում:

Հորատման թագիկների թափոնները բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են:

Հորատման թագազվիսիկը իրենից ներկայացնում է պողպատյա օղակ, որի ստորին մասը ամրանավորված է կարծր համաձուլվածքով կամ ավաստներով: Աշխատանքի ընթացքում այդ շերտը մաշվում է իսկ մնացորդը իրենից ներկայացնում է պողպատյա թափոն: Պողպատը իրենից ներկայացնում է երկաթի և ածխածնի համաձուլվածք:

ՀՀ բնապահպանության նախարարի **2006** թվականի դեկտեմբերի **25**-ի **N 430**-Ն հրամանի Հավելվածում բերված , Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների Ցանկի ում պողպատի կտորներ, որպես թափոն չեն նշվում: Այդ ցանկում առավել մոտ է , Չտեսակավորված պողպատ պարունակող թափոններ (այդ թվում՝ պողպատի փոշի)ն տեսակը **(351201110100 4)**:

Համաձայն ՀՀ Կառավարության **15** հունիսի **2017** թ. **N 689**- Ն որոշման տվյալ թափոնի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կլինի , շատ ցածր**ե**, գործնականում անվտանգ, այն կդասվի վտանգավորության **V** դասին:

Հորատման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել մեկ հորատման թագիկ: Հորատումից հետո այն կփոխարինվի նորով:

